

Հայեացքները՝ ինչպէս իրանը, այնպէս և օտարինը, առարկան քննուում է ամէն կողմից և զրուցակիցները իրանց համար աննկատելի իերոպով ենթարկուում են այդ օդտակար գաղափարներին։ Այսպիսի զրուցատրութիւնները նորութիւն չեն նաև մեզ մօտ, գործին նուիրուած մարդիկ յաջողութեամբ առաջ են տանում այդ և միշտ էլ երախտազէտ աշակերանները պահպանում են նոցա մասին բարի և քաղցր յիշողութիւն, ինչպէս իսկական բարոյական դաստիարակների մասին։

(Քաղեց) Ա.Ա. Շահնազարհան

## Մ Ա. Ր Ի Բ Ա. Ս

Հրատարակում ենք ահա այն Մարիբասը, որի գիւտը Բազմավէպի մէջ Բասմաջեան (1896. նոյ. 3), Հանդէս Ամս.-յի մէջ Կարրիէր՝ Հ. Տաւեանին ուղղուած մի նամակով (1897, յունվ.), աւետեցին։ Իւրաքանչիւր բանասէր Հայ անշուշտ նուազ կամ առաւել հետաքրքիր անհամբերութեամբ սպասում է այս, Հանդէս Ամս.-յի լեզուով խօսելով—«ապշեցուցիչ աւետսի» արդիւնքը տեսնելուն։

Ամէնից առաջ մի քանի խօսք Մարիբասի ներկայ թարգմանութեան Զեռագրի մասին։ Մարիբասեան այս քաղուածքը դանելու պատիւը պատկանում է լիովին Նաու (F. Nan) ջանասէր ասորագէտ քահանային, որը Փարիզի և Լոնտոնի մատենադարաններում եղած բոլոր ասորի ձեռագիրները մանրագնին քննութեան է ենթարկել։ Արդէն իւր 1896-ին Միքայէլ ասորու ձեռագրի մասին գրած մի յօդուածի մէջ (Journal asiatique, 1896. 9-ը սերի, տ. VIII, թ. 523 ս.) նրա ուշադրութիւնն է գրաւել վերջնիս աղ-

բիւրների շարքում նաև Մարիբասի յիշուիլը։ Նոյն տարին և առաջին անգամ դաել է նա Փարիզի Ազգային մատենադարանու ասորական ժողովածուի մէջ № 306 ձեռագիրը, որի fol. էջերից 71—77 ամփոփում են Մարիբասից եղած այս քաղուածքը։ Ձեռագրիս երկարութիւնը 28,5, լայնութիւնը 20. գրութեան լայն.ը 15, երկար.ը 21 սանտ. է. խրաքանչիւր երես ունի 20 տող։ 1896-ին սոյն Ձեռագրը նկարագրել է Խօր. աս.-ի մէջ (Սեպտ. - Հոկտ.) Շաբօ (Chabot) քահանան։ Ինչպէս Կարրիէր իւր նամակում խոստովանել է, նաու երէցի միջոցով է ճանաչել ինքն այդ ձեռագիրը և իւր նամակը գրել է նասւի վերոյիշեալ յօդուածից յետոյ։ Անցեալ տարի Դիւվալի ասորական գրականութեան պատմութիւնը (Paris, 1899. La littérature syriaque.) կարդալիս, ուշագրութիւնս գրաւեց այդ հատուածը, բայց հազիւ այս տարի կարողացայ Փարիզից գերման։ մինխստրութեան միջոցով այդ ձեռագիրը ստանալ։ Արդէն ընագրի արտագրութիւնը վերջացրել էի, երբ լսեցի թէ յարգելի գիտնական ն. Մարրն Մարիբասի մասին մի գասախօսութիւն է կարդացել և, ինչպէս սիրակիր յօժարութեամբ յայտնել էր ինձ Հ. Թ. Կէտիկեան, առանձին փոքր մի ուսումնասիրութիւն ևս հրատարակել է պլոֆ. Մարր „Արաբское извлечение изъ Сирийской Хроники Мариябаса“ (С. Пет. 1902, 8-ր էջ 10.) վերնագրով։ Արաւասի այս տարրուայ Բ—Գ հ.-ի մէջ Հ. Մ. Գ. այդ ուսումնասիրութեան մասին հաղորդում է, որ նա արտատպուած է Զаписки ВОИРАՕ. տ. XIV. էջ. 078—091-ից։ Ինձ անհնար եղաւ գժբաղդաբար մինչեւ օրս այդ յօդուածը ձեռք բերել։

Ի՞նչ նշանակութիւն ունի Մարիբասի գիւտը։ Մեզանում բոլորը հետաքրքրուում են Մարիբասով, որովհետեւ կարծում են, որ գրանով Խորենացին կընկնի կամ կբարձրանայ։ Ամէնքի հետաքրքրութիւնը զուտ գրական է։ Պատմական հետաքրքրութիւնը ընդհակառակը բոլորովին պակասում է, ով փորձեց մինչև օրս Հայկի և Բերի, Առմենակի և իւր յաջորդների ու Արամի մասին պատ-

մուածները պատմութեան լուսով պարզել։ Մեր ազգի նախնական պատմութիւնը ամփոփող միակ աղբիւրը անշառչա այս տեսակէտից աւելի մեծ ուշադրութեան արժանի է։ Մի թոյլ փորձ պէտք է անենք մենք՝ մեր բնագրին կցած ծանօթութեանց մէջ Հայկի և Բելի առասպելի ծագումը բացատրելու։

Ներկայ բնագրի հրատարակութիւնը Մարիբասեան քննադատութիւնը բերում է բոլորսին մի նոր հետքի վրայ, որը մինչև օրս բացի Կարրիէրի վերոյիշեալ նամակում կողմանակի յիշուելուց, ոչ մի այլ բանասէրի ուշադրութեան չի արժանացել։ Մարիբասի այս քաղուածքը մեծ մասամբ գրեթէ բառացի գտնուում է Միքայէլ ասորու մօտ, ինչպէս որ բնագրին կցուած ծանօթութիւններից պէտք է երեւայ։ Հայերէն Միքայէլ Ասորին, որի փրանսէրէն թարգմանութիւնը Լանգլուան վազուց տուել է (Chronique de Michel le Grand, patriarche des Syriens Iacobites. trad. par V. Langlois. 1866. Venise—Paris) շատ թերի է։ Ասորերէն ընտիր բնագիրը 1900 թուից ի վեր հրատարակում է Հ. Շարօ, վերոյիշեալ ջանասէր երէցը, որից մինչև օրս, որքան ինձ է յայտնի, Ա. Հատորի 1. դիրքն է երեւացել։ Մարիբասի նախնական բնագիրը վերականգնելու համար, ինչպէս Շարօի այս հրատարակութիւնը, նոյնպէս և Բրիտանական թանգարանի ms. orient.-ի № 4402, և Մօսուլից նոր ստացուած Միքայէլ ասորու ժամանակագրութեան արաբական թարգմանութիւնները շատ մեծ նշանակութիւն ունին։ Մարիբասի հետազոտութիւնը զուտ դիտնական տեսակէտից այնքան կարեոր է Խորենացու համար, որքան Միքայելի, և որովհետեւ մենք զուտ Մարիբասից քաղուած մի երկ ունինք մեր առաջ ներկայ գրուածքով, այս պատճառով նա կրկնակի արժէքաւոր է մեզ համար։ Ի հարկէ ներկայ Մարիբասեան քաղուածքը ոչ մի կերպով չի արդարացնում այն յօյսերը, որ մենք Խորենացու համաձայն Մարիբասի բովանդակութիւնից սպասել կարող էինք։ Նա յիշատակում է Հայերին էջ 73 Ե. տող 87—առաջին անգամ այնտեղ, ուր Խորենացին ասում է. «Աստանօր սպա-

ոին բանք ծերունւոյն Մար Արաս Կատինայ» (Խոր. Բ. 9.)։ Մի համեմատութիւն Միքայէլ Ասորու հետ անկասկածելից է դարձնում սակայն, որ Մարիբաս Հայոց նախնի պատմութեան մասին շատ աւելի տեղեկութիւններ տուածպիտի լինի, քան թէ այս ուշ ժամանակի քաղուածքում կայ։ Բացի այս յապաւումներից քաղուածքը անողը արել է նաև իւր կողմից մի շարք յաւելումներ, և առ այժմ ըստ իս ոչ մի իրաւունք չունինք Մարիբասին Զ. դար տառելու։ Այս խնդիրների մասին ընդարձակօրէն ծանօթութեանց մէջ կխօսուի։ Այս գիւտը գրական կերպով լուծում է ամէնից առաջ Մարիբաս անունով մի ժամանակագրի հարցը։ Ինչպէս կարրիէր, նոյնպէս բոլոր քննադատական ուղղութեան այլ հետեւղները պէտք է ընդունեն, որ Մար սէս նոյնը չէ, ինչ որ Մարիբաս իսկ թէ նա որչափով Մարիբասիցն է քաղել իւր տեղեկութիւնը և որչափով առանցութիւններից՝ այդ պէտք է պարզէ քննութիւնը։

Հաւատարիմ մնալով 2 տարի սրանից առաջ յայտնած տեսութեան (տես Սրարատ, 1900. նոյ.-Դեկ. էջ 518 շ.), մենք համոզուած ենք, որ Մարիբասն իրը պատմութեան աղբիւր գործածող առաջին հեղինակը Փաւստոսն էր և բ.ը Խորենացին։ Ներկայ քաղուածքն ևս հասնում է մինչև Գրիգոր Լուսաւորչի և Տրդատի ժամանակները։ Փաւստոսի Գ. դպրութիւնը Մարիբասի անմիջական շարունակութիւնն է կազմում։

Մի քանի խօսք ևս Մարիբասի անուան մասին ինչպէս Բրիտանական Մուզեումի Միքայէլ Ասորու ձեռագիրների, նոյնպէս այս քաղուածքի մէջ անուանս գրութեան ձեռ ոչ մի կասկած չի թողնում, որ մենք Մարիբասին ոչ Մար—Արաս կամ Մար—աբա, ինչպէս մինչև օրս ենթագրուել է, պէտք է կարդանը։ Մեր ձեռագրում նոյն իսկ ձայնաւորներն են դրած (pronktiert)։ Այս Մարիբասը կոչուում է Քաղդէացի։ յայտնի է, որ Մովսէս աշնուանում է նրան Կատինա, իսկ Փաւստոս կամ Սերէսոսի Անանունը՝ Մծութացի։ Անշուշտ Սերէսոսի Փիլիսոփայ կոչումը Կատինա բառին զուգակից և համանիշ է ենթա-

գրուել. Կտինա նշանակում է խսկապէս fidelis, docilis—հաւատարիմ, վարժ (gelehrig)։ Բառումդարաբէն իւր das Buch d. Chrie գրքի մէջ Մծուրնացի համարել է Մծընացու ազաւազումն Մեղ թուռում է, որ այս 2 անուններն եւս միևնոյն բառից են առաջացել. Խորենացին իւր անկէտագիր բնագրում Քաղդէացի բառը կարդացել է իբր Կատինա, իսկ Փաւստոս կամ Անանունի հեղինակը իբր Մ(ա)ծարնա, որից յետոյ Մծուրնա է դարձել։ Ի հարկէ այս մի ենթագրութիւնն է, որն անելու իրաւունք է տալու Ասորի յիշատակարաններում Մարիբասին Հայոց մէջ տրուած տիտղոսների բացակայութիւնը։

Առ այժմ այս մի քանի խօսքով բաւականանալով, անցանենք Մարիբասի ասորերէն սերբու տառերով դրած արաբերէն ժամանակագրութեան հայերէն վերծանութեան Զմոռանամ ասել, որ Մարիբասի իսկական գիրքը ըստ 71b,1 կոչուում է ժամանակագրութիւն։

### 71b Մարիբաս Քաղդէացի.

- 1) Դարձեալ գրում ենք մենք բաղելով Մարիբաս Քաղդէացու ժամանակագրութիւնից. Առաջինը
- 2) Նրանցից, որոնք մարդկանց վրայ իշխել են, էր Նիմրօս. Նա կառուցեց 3 քաղաք. Ար—Բահա
- 3) (Ուրհա), Բաս—ալ—Այն և Նզիբին (Մծըն). Նախուրե օրերում ապրում էր Այուք և Բ'ալլատ և Բատ. ոս
- 4) Կոչուում է Նաև Եուքաք իբն Զարին (Յոքաք որդի Զարենի), Դսուե (Եսաւի) որդիներից, և ապրում էր 500 տարի Մուսայից (Մոլսէսից) առաջ։
- 5) Մաւրօֆոս կառուցեց Դամասկուս—Շամ քաղաքը Իբրահիմի (Աբրահամ) ծննդից 20 տարի առաջ։
- 6) Զըհեղեղից մինչև Աբրահամ է 1801 տարի, Ադամից մինչև Աբրահամ 3000 տարի։
- 7) Տօտ 2 հարիւր մարդ բարձրացան սար (քացատրութեանց և ծանօթութեանց մէջ կյեցուել որ խօսքը այստեղ Հերմոն լեռան մասին է) և թողեցին կանանց։
- 8) Նրանք կոչուեցան Բանի Ալուհիմ (ուղիղը՝ Բանի Էլօհիմ—

- որդիք Աստուծոյ)։ Կայէն որոշեց տարածութեան, բովանակակութեան և ժանրութեան չափերը։
- 9) Սէթ հնարեց երայտկան լեզուի գրութիւնը։ սա աշխարհում առաջին լեզուն է։
- 10) Ռւրիշներն ասացին, որ ասորեքէնն է նախնական։ Ասորեատանի առաջին թագաւորը Իշլոսն է (Քել)։ Նրան յաջորդեց իւր
- 11) որդին Նինոս, նա կառուցեց Նինուէ քաղաքը և անուանեց այդ Լիճինոս։ Այս
- 12) Ժամանակներում Մելքիսեդէկ շինեց Երուսաղէմ (Ռւրիշ շալիմ) քաղաքը և անուանեց այդ Ռւրաբ։
- 13) Աքրահամ 60 տարեկան էր, երբ իւր հօր մօտից դուրս եկաւ և եկաւ ու ընակուեց Խառանում։
- 14) այնտեղեց գաղթեց նա Քանանի երկիրը։ Ասորեսանցիի=Ասորիք։
- 15) Շամիրամ Նինոսի կինը կառուցեց, ջրհեղեղեց վախենալով, բլուրներ։ Երբ
- 16) Մովսէս ծնաւ, ծգեցին նրան, Փարաւոնից վախենալով, նեղոս գետ։
- 17) Մարիա գտաւ և կըթեց նրան։ բայց իւր ամուսինը Մաֆրա ատում էր Մովսէսին։
- 18) այս պատճառով Մարիայի մահից յետոյ Մովսէս կախաւ Բ'ուէլ (Հուագուէլ) Մադիամացու մօտ իւր եղբօր շաւղով (հետեւելով)։ նա
- 19) քառասուն տարեկան էր։ Եզիրտացիի=Կոբացիի։ Մովսէս գրեց օրինաց (Հնդամատեան) գերքը (Թօրա) Երայտկան լեզուով։
- 20) Ասորեստանցւոց իշխանութիւնը տևեց 1300 տարի։

72a

- 21) Սրանցից յետոյ տիրեցին Մարեր և Քաղզէացիք։ սրանցից են Փուլ, Թիգլարփալասար, Սալմանասար,
- 22) Սենեկերիմ, Բուկտանասար։ Ողիայի, Յուդայի թագաւորի օրով ելաւ Բուլ Բարելաստանի թագաւորը
- 23) Սամարիոյ գէմ և առաւ Մանայիմից (ընագրում—Մահանիմ)՝ Իսրայէլի թագաւորից, 1000 քանզար ոսկի (ընագր. քանթար Գիտտար=փող.)։
- 24) Նրանցից յետոյ Ասորեստանցւոց (Ասուրի) թագաւորը՝ Ողիա թագաւորի օրերում գերեց
- 25) Յուդան և Իսրայէլի 10 ցեղերը, և սա առաջին գերութիւնն

- 26) է: Այդ ժամանակն էր ապրում և նսայի մարդարէն, Յովակայի և Աքազի օրերում Սալմանասար Առուրի թագաւորը  
 27) պաշարեց Սամարիան Յ տարի և տասն ցեղերին Բաբելոն դերի տարաւ.  
 28) Միացեալ թագաւորութեանց վախճանը: Սրանից յետոյ թագաւորեց Եղեկիա Խորայէլի վրայ,  
 29) և Յուդայ-Սամարիա կառավարում էին տեղապահներ. Սամարացիի-Նազորացիի. Սալմանասար ընակեցրեց  
 30) Յուդայի երկրում ուրիշ ազգեր և իշխեցին նրանց (Սամարացւոց) վրայ առիւծներ (այսինքն՝ առիւծներ, վայրենի դաշտաններ նրանց մեջ կորուստներ էին պատճառում), մինչեւ որ նա  
 31) մի Յուդացի քահանայ (Եղբին ի նկատի ունի) ուղարկեց և նրանց ասորւոց լեզուով Թօրա սովորեցրեց. առիւծները  
 32) հեռացան նրանցից: Եղեկիայի օրերում զօրք ուղարկեց Սենեկերիմ (Սանհարիբ)  
 33) Երուսաղէմ: բայց (և) նրանք կոտորուեցան. նրանից յետոյ իւթ որդին Սարհատում (Ասորդան. Հայ.) պատարագ ուղարկեց  
 34) Երուսաղէմ: իտալական կամ Լատինացւոց բագաւորները.  
 35) Այս ժամանակներում Թօմուլոս (Հռոմուլոս. Հ.) չինեց Հռոմ (Թօմ), և այս Աքազի Յուդայի թագաւորութեան օրերում:  
 36) Այս ժամանակ Բուղթուն (Բիւղառ) չինեց Բուղանգիա (Բիւղանգիսն) և նրանից յետոյ Կոստանդին  
 37) մեծացրեց և ընդարձակեց այդ և կոչեց իւթ անունով: Եղեկիայի ժամանակ ապրում էր Տուրիդ,  
 38) Խորայէլի այն գերուածների մէջ, որոնք նինուէումն էին: Յովսիայի օրերում առաւ  
 39) Մարաց թագաւոր Տուկանտոս Ասուրիների թագաւոր նաբակարդանից (Նաբուզարտ. Հ.),  
 40) որը Երուսաղէմ և տաճարը այցեց, նինուէ քաղաքը. այս պատահեցաւ Բակատնասարի (Նաբուզոգոնսոսոր) ժամանակ.

72b

- 41) Նաբուզոգոնսոսորի մահուանից յետոյ տիրեցին Յուդայի վրայ իւթ որդիքը, Մարտուկ և Բալտասար (Բաղտասար). Դարիուս (Դարեհ)  
 42) սպանեց Բաղտասարին և կուրաշ (Կիւրս) սպանեց Դարե-

- հին նա ոչնչացրեց, Քաղդեացւոց,
- 43) Մարաց (Մեգերի) և Ասուրիների (Ասորեստանցւոց) թագաւորութիւնը: (Այսպիսով) իշխանութիւնը մնաց Պարսկաց ձեռքում մինչև Խոկանդարի (Աղեքսանդրի) ժամանակը:
- 44) Պազոմէսոս (Բատլամառւս) Փիլագելֆոս (Փիլադելֆոս) ուղարկեց Եղիազար քահանայի մօտ և խնդրեց (Գիրքը) Հին Կտակարան (և)
- 45) այնպիսի մարդեկ, որոնք 2 լեզուներին այսինքն Եբրայեցերէնին և Յունարէնին աիլապետում էին, թուով 72 անձինը:
- 46) դէպի Փօրօս կղզին, ուր և Նրանք Խօթանասնից ընագիրը գրեցին, և
- 47) թագաւորը առաւ այդ և տեղաւորեց իւր Աղեքսանդրիայի մատենադարանում: Այս ժամանակ եղան թարգմանութիւններ
- 48) յունական փիլիսոփաներից և իմաստուններից: Աշխարհին, բոլոր թագաւորութիւններին տիրեցին
- 49) Մակեդոնացիք, այսինքն Յոյներ, Նրանց թագաւորն էր Աղեքսանդր և Պարսիցը
- 50) Դարեհ, որը Ահշուրաշ կոչուեցաւ: Եղր քահանան գրեց, պատրաստեց այն աստուածային գրքերը,
- 51) որոնք գերութեան մէջ մտքից և որտից անհետացել էին:
- 52) Այս ժամանակ տեղի ունեցաւ Եգիպտական ապստամբութիւն Դարեհի դէմու և թագաւորեց պարսից վրայ Արտահշաշ (Արտաշէս):
- 53) Աֆրիկինոս Հռովմայեցւոց զօրապետը սպանեց Քար... (հետեւում է մի բառ, որի 2 տառն է միայն գրուած). որովհետեւ ամենայն հաւանականութեամբ Քարկեդոն պիտի լինի բառըս պատշաճաւոր է համարել արտագրողը մտքի անհեթեթութեան պատճառով կիսատ թողնել այդ) և
- 54) կոչեց այդ աշխարհը իւր անունով Աֆրիկա:
- 55) Պղատոն ասաց, որ Աստուած կայ և նրա հետն է սկզբնական նիւթ և
- 56) տեսակ (Gattung, Art.), և տեսանելի աշխարհը ստեղծուած է և արարած և շնչաւոը (արիւն ունեցող): Հոգին
- 57) արարած և մահկանացու չէ և ո՛չ ևս արիւն ունի. նա աստուածային է.
- 58) նա ունի 3 մաս. լեզու (բանականութիւն), բարկութիւն (զգացմունք) և կիրք (կամք): նա (հոգին) թափառում է

- 59) մի մարմնեց դէպ և միւսը և դառնում է չորքոտանի և  
սողուն։ Մարգիկ գտան մի Աստիծուց  
60) շատ աստուածներ։ Այս ժամանակներում Հռովմայեցիք  
տիրեցին Լասունտի՛ու-յի

732

- 61) կամ Խսմայելացիների վրայ, որոնք Եղոմացի կամ

62) Մակասաբա կոչուած Արաբներիցն են, և գերի տարան  
նրանց: Աղէքսանդր կառուցեց Աղէքսանդրիան և անուա-  
նեց իւր անուամբ.

63) Նա սովորեց Արիստոտելի մօտ (քնագրում Աղէքսանդրի ա-  
նունից 2 տառ է միայն գրուած): Արտաշէս դրաւեց Եղիպ-  
տաս և

64) ոչչացրեց Կոպտերի թագաւորութիւնը. սա (Արտաշէս)  
երկրորդն է և կոչուում է Նազ Ուքոզ (ըն. Ուկոս): Աղէք-  
սանդր ծնաւ.

65) Եւր հօր Փիլիպպոսի արքայութեան 8-դ տարին, և Դարեհի  
առաջին տարին թագաւորեց Աղէքսանդր

66) Յունաց, այսինքն Մակեդոնացւոց վրայ, 20 տարեկան հասա-  
կում. Նա 3 կանգուն երկար էր.

67) Նա պատերազմեց 35 թագաւորների գէմ և յաղթեց նրանց  
և գրաւեց նրանց երկիրները:

68) Նա ունէր 12 բիւր զինւոր և իւր թագաւորութեան վեցե-  
րորդ տարին

69) Իսսոս քաղաքում պատերազմեց Դարեհի դէմ և յաղթեց  
ու սպանեց նրան:

8. ԹՐԱՒԵԼՈՒ

( Եարունակելի )